Քեչիշդաղ, Դարաբաղլար և Դահնաղ գիւղերի մօտ. առաջին վտակի ճիւղերի վերայ են ընկնում Խոսրով, Զիմ, Մանկուս, Աղքիլիսայ, և ապա Զվինդեոլ և Քիւսուզ գիւղերը. վերջին երկուսը բաժանուած են առաջիններից Խաչդարասի կոչուած (մեր յուշարձանի անունով) անտառապատ ձորագոգով։ Այդ բոլոր գիւղերում կան աւելի կամ պակաս չափով հայ շինարարութեան հետքեր և մնացորդներ, մինչև այժմ դեռ ևս բանասիրութեան անյայտ. մեր խնդրի լուսաբանութեան համար կարևորները Մանկուս և Աղքիլիսայ նախկին թուրքաբնակ գիւղերում։ Վերջին գիւղում դեռ ևս կանգուն են սաղաշէն, փոքրիկ եկեղեցու պատերն ու ափսիդը. չէնքը, թէև ճարտարապետական առանձին արժէք չունի, բայց պահուած են մի քանի արձանագրութիւններ, որոնք տեղի պատմութեան մասին մեզ նորութիւններ են տալիս։ Բեմի ճակատի՝ 70 × 58 սմ. մեծութեամբ կայ հետևեալ արձանագրութիւնը (գծագ. 39ա).

Ես Գրիգոր եւ ամուս/(ի)ն իմ Մամքան մ/
եր դրամով շինեց/աք ձիթահանք եւ.../
տվաք ՅԾԱԾԻՆ մեք ազատ արարաք/
զվանքս միաբանաւքս յամէն չար/
է վՅ փրկութեՀ հոգ/ մերոց որ խափան.../

Նոյն բեմի մի այլ քարի վերայ՝ 64 × 47 սմ. մեծութեամբ՝ կայ մի արձանագրութեան հետևեալ մնացորդը (գծագ. 39բ).



Գծագիր 39ա Գծագիր 39բ

Արձանագրութիւն Աղքիլիսայում Գրիգորի որդոյ Մարծպանայ.

. . . . (որ)դի Մարծպանա
. . . . ի սը ՅԾԱԾԻՆս եւ ?
. . . . աւառ ? շինեցա(ք ?)
. . . . (ազ)բիւրս վՅ հոգոյ իմ(ո)
. . . . յ։ Ա։ շինական խ . .
. . . . (աղ ?)ատ յամ
. . . . (չ)արէ այլ չահ ու զէն
. . . . ՅԺԸ հայրապետ
. . . . . .

Առաջին տողի մէջ անշուշտ յիշուած էր արձանագրողի անունը, ոմն «(որ)դի Մարծպանա»։ Գանձակեցին[1] յիշում է «Գրիգոր

(1) Ղուկ. հրատ. Թիֆլիս. 259. 354։